

ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ

Մեկ տարվա աշխատանքների ամփոփումը փորձնական համայնքներում

Մեկ տարուց ավել է, ինչ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի Ըստ աշխատանքների կատարման բյուջետավարում՝ ծրագիրը գործում է հանրապետության հինգ քաղաքային համայնքներում՝ Աբովյան, Դիլիջան, Վեդի, Մասիս և Իջևան : Այս տարվա հունվարին, քաղաքապետարաններում ձևավորված աշխատանքային խմբերը, ծրագրի փորձագիտական խմբի աջակցությամբ, ավարտեցին համայնքի 2006 թվականի տարեկան բյուջեները, որոնք մշակված են նոր աշխատանքի արդյունքներն արտահայտող ձևաչափով: Փորձագիտական խումբը, որը կազմված է Համայնքների ֆինանսիստների միավորման փորձագետներից և ծրագրի աշխատակազմից, մեծ ջանքեր ներդրեց բյուջեների ամփոփման, ինչպես նաև քաղաքապետարանների աշխատանքային խմբերի անդամների կարողությունների բարձրացման համար:

Մարտ ամիսին, Ըստ աշխատանքների կատարման բյուջետավարում՝ ծրագրում ընդգրկված բոլոր հինգ քաղաքներում կազմակերպվեցին հանդիպումներ քաղաքապետարանների աշխատանքային և նախաձեռնող խմբերի, ինչպես նաև համայնքի ակտիվ անդամների հետ: Հանդիպումները ունեին երկու գլխավոր նպատակ համայնքներին ներկայացնել 2006 թվականի արդյունքներն արտահայտող բյուջեները, ինչպես նաև քննարկել համայնքներում իրականացվելիք կապիտալ ներդրման ծրագրերի տարբերակները, որոնք ընդգրկված են համայնքների առաջնահերթ իրականացվելիք գործողությունների ցանկում:

Համայնքնային բյուջեների ներկայացումն ընթացավ հանգիստ, ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ծրագրի իրականացման ողջ ընթացքում խմբերը ակտիվ մասնակցել են տեղեկատվության հավաքմանը և բյուջեի քննարկումներին, Իսկ ներդրման ծրագրերի շուրջ քննարկումները առվել քան բուռն էին՝ բանավեճի առարկան ծրագրերի ընտրության չափանիշներ էին:

Ըստ աշխատանքների կատարման բյուջետավարում՝ ծրագրի շրջանակներում նախատեսված ներդրումային ծրագրերն իրականացվելու են համատեղ ֆինանսավորմամբ ՄԱԶԾ-ի և համայնքի հավասար մասնակցությամբ: Ընտրված ծրագրերի իրականացմանը մասնակցելու են միայն տվյալ համայնքի կազմակերպությունները և համայնքի բնակիչները:

Թե ինչ ծրագրեր կընտրվեն և ինչպես դրանք կիրականացվեն պարզ կլինի հաջորդ ամսին: Բայց որ դրանք մեծապես կներգրավեն համայնքի բնակչությանը և կնպաստեն համայնքների զարգացմանը վստահաբար կարելի է պնդել այսօր:

Սուսաննա ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՄԱԶԾ-ի «Ըստ աշխատանքների կատարման բյուջետավարում»
ծրագրի համակարգող